



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

<< 08 >> մայիսի 2019թ.  
ք. Արմավիր

N 179/50-2019

«ՀԵԹԵՐՑՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ-2019» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ  
ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասով, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի տեղակալի 2019 թվականի փետրվարի 22-ի N 03/07.1/2598-19 գրությունը «Ընթերցման հանրապետական օլիմպիադա-2019» միջոցառման անցկացման նպատակով

կարգադրում եմ՝

1. Ստեղծել մարզային գնահատող հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (Ն. Սարգսյան)՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել Հայաստանի մշակութային հիմնադրամի նախագահ Մանուկ Նիկոյանին, Հայաստանի գրողների միության Արմավիրի մարզային բաժանմունքի նախագահ Ռ. Սահակյանին (համաձայնությամբ), «Արմավիրի N 4 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հայոց լեզվի և գրականության ուսուցիչ Արմինե Խլիլայանին (համաձայնությամբ), «Վաղարշապատի Ներսիսյան N6 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հայոց լեզվի և գրականության ուսուցիչ Սուսաննա Մամիկոնյանին (համաձայնությամբ), «Լեռնագոգի Օնիկ Փակումեանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հայոց լեզվի և գրականության ուսուցիչ Հերիքնազ Մկրտչյանին (համաձայնությամբ):
3. Հանձնաժողովին (Ն. Սարգսյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել մինչև 2019 թվականի մայիսի 7-ը և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Invalid signature

X *S. Mambardzum*

VERIFIED OCSP 5/8/2019 13:29:10 GMT+4

Signed by: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ**

**Հանձնաժողովի նախագահ**

Ն. Սարգսյան

- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ:

**Անդամներ**

Ա. Թովմասյան

- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի պետ:

Ա. Առաքելյան

- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ:

Գ. Գևորգյան

- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի առաջատար մասնագետ:

**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝**

**Վ. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ**

